Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 42

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՐԴԱՆ ՍԱՖԱՐՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Ա. Զաքարյանը, Ա. Խաչատրյանը, Վ. Մկրտչյանը, Վ. Մովսիսյանը, Ա. Սարգսյանը, Ս. Շուխյանը, Բ. Վարդանյանը, Կ. Շահազիզյանը. Տ. Գալստյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Աշտարակի համայնքային սեփականության 2020թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Աշտարակ համայնքի ավագանու 14.11.2016թ. N 9-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

5. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով 2021թ.-ի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին մասնակցելու համաձայնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/

6. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

7. Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

9. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

10. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

11. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

12. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

13. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Սարգսյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները հիմնականում տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Սարգսյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 3</u> - Աշտարակի համայնքային սեփականության 2020թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի

գույքագրման արդյունքներն՝ ըստ համայնքի ենթակա կազմակերպությունների և հանձնաժողովների կողմից դուրս գրման ներկայացված գույքի ցանկը:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Սարգսյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - Աշտարակ համայնքի ավագանու 14.11.2016թ. N 9-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց փոփոխություններ կատարել Աշտարակ համայնքի ավագանու 14.11.2016թ. N9-Ա որոշման մեջ:

Զեկուցողը նշեց, որ կատարվող փոփոխության հիմնական նպատակը համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի բնականոն աշխատանքն ապահովելն է:

Ս. Սահակյանին հարցեր ուղղեցին Տ. Գալստյանը, Կ. Շահազիզյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Սարգսյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով 2021թ.-ի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին մասնակցելու համաձայնություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաներ, ստանալու նպատակով Աշտարակ համայնքի կողմից ներկայացված ծրագրային հայտերին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Կ. Շահազիզյանը, Տ. Գալստյանը, Ա. Սարգսյանը, որոնց Գ. Եզիազարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց թույլատրել Աշտարակ

քաղաքի Ն. Աշտարակեցու փողոց 82 շենքի հարևանությամբ գտնվող, 042-022 ծածկագրից 14.8քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը առևտրի տաղավար տեղադրելու համար կառուցապատման իրավունքով տրամադրել 25 տարով՝ 25 000 ՀՀ դրամ վճարով:

Զեկուցողին հարցեր ուղղեց Տ. Գալստյանը, որոնց Հ. Բաղդասարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - *Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հիմք ընդունելով քաղաքացի Մ. Մկրտչյանի դիմումը Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի N 116/5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 02-001-0143-0316 ծածկագրով 157քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով օտարել կից ընդլայնվող հողամասի սեփականատիրոջը:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Վ. Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասերը մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով, միաժամանակ սահմանել մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեց Տ. Գալստյանը, որոնց Հ. Բաղդասարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն

տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն փոխանցված 520-006 ծածկագրից 0.0798հա և 520-008 ծածկագրից 0.0983հա գյուղատնտեսական նշանակության հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելուն և աճուրդ-վաճառով օտարելուն:

Միաժամանակ, առաջարկեց սահմանել մեկնարկային գին՝ կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով սեփականատեր հանդիսացող քաղաքացիների դիմումները /թվով՝ 7 դիմում/, հավանություն տալ ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Զեկուցողին հարցեր ուղղեց Տ. Գալստյանը, որոնց Հ. Բաղդասարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող 261-029 ծածկագրից 229.8քմ մակերեսով, քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը համայնքային սեփականություն ճանաչելուն:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - *Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հավանություն տալ 02-001-0135-0166 ծածկագրով /0.15հա/ գյուղատնտեսական նշանակության

հողատարածքի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման փոփոխելու վերաբերյալ և 02-001-0596-0024 ծածկագրով /0.572հա/ գյուղատնտեսական նշանակության հողատարածքից 0.0149հա հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկություններին:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ համայնքային սեփականության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Միաժամանակ առաջարկեց սահմանել մեկնարկային գին:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2021 թվականի մարտի 29-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	**ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ**
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	**ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ**
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	**ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ**
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	**ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	**ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. Ս Ա Ֆ Ա Ր Յ Ա Ն**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ